հասին 'ի Նաւահանդիստն Ֆինիքէ (Յունիս 5), տագնապեալ 'ի մրրկէ ծովու և 'ի պակասութենէ ջրոյ ելին անդ 'ի ցամաք, և ճանապարհ արարին 'ի նպատակեալ տեղին։ Ի հասանիլ Բ-ողոր Պաշէ կոչեցեալ աղբիւրն յորդահոս, տկարացաւ Գրիգոր 'ի տենդ ախտէ, և ոչ կարաց գրել այնուհետեւ զօթեւանս՝ որ ցայնվայր գրեալ էր, յիշելով 'ի նմա զանուանս ազգայնոց, որք սիրով և բարութեամբ պատահեցան նմա։ Հասեալ նեղութեամբ և վշտօք 'ի Կուտինա քաղաք, անկաւ 'ի մահիճս և ուխտաւորքն մեկնեալ ցրուեցան իւրաքանչիւր 'ի քաղաքս և յաւանս, եւ ինքն դադարեաց անդ աւուրս 21, և ժողովուրդ քաղաքին սիրով ընկալեալ զնա հոգային զամենայն պէտս՝ դարմանելով զհիւանդութիւն նորին։ Իբրեւ լուաւ Յովհաննէս Պատրիարք զհիւանդութիւն սիրելւոյն իւրոյ՝ տրտմեցաւ յոյժ, և փութանակի առաքեաց անդ զչորեսին գլխաւոր վարդապետս, որք էին Յարութիւն, Յակոբ, Սահակ եւ Յակոբ Պալատցի հանդերձ այլովք՝ եւ Գրիգոր կազդուրեալ սակաւ ինչ 'ի հիւանդութենէ իւրմէ զօրացաւ, և ել նոքօք հանդերձ 'ի Կուտենայ. ուղեկից եղեն նմա և ոմանք յերեւելեաց քաղաքին, և հասին 'ի Պրուսա։ Ներսէս վարդապետ Աւաջնորդ քաղաքին և երեւելի անձինք ընկալան զնա փառօք և պահեցին զաւուրս ինչ։ Ապա մեկնեալ անտի, նաւեցին 'ի Մուտանիայ և հասին 'ի Կոստանդինուպոլիս (Յուլիս 23)։ Եւ տեսեալ Գրիգորի զսիրելին իւր ըզ-Յովհաննէս Պատրիարք և զայլս ուրախ եղեն յոյժ և խընդացին, և անցեալ յիւսկիւտար՝ օթեւանս կալաւ 'ի վանքն Երուսաղէմի, և ետ չինել անդ սենեակս։ Յելս Նոյեմբեր ամսոյ չոքաւ յեկեղեցի Ս. Գէորգայ 'ի Սամաթիա՝ կատարել անդ զտօն Ծննդեան Քրիստոսի։ Ոմանք 'ի կուսակցութենէ Կաթոլիկ անուանելոց, զնացեալ մատնեցին զնա ստութեամբ Դեսպանին Գալղիոյ (Վիլնիով մարքիզ), թէ Պատրիարքն Երուսաղէմի 'ի քարոզի իւրում հայհոյեաց զպատարագն ձեր, իսկ նա գոլով այր խոհեմ՝ անարդանօք դարձոյց զնոսա յետս՝ ասելով, ոչ հաւատամ թէ այրն այն խօսեսցի զայդպիսի բանս։

Հ. Մ. Զամչեան դովութեամբ յիշատակէ զհամարումն Դեսպանին՝ զոր ունէր 'ի վերայ Գրիգորի, գրելով այսպէս.